ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՅԻՍԻ 2026 թվականի N 542-Ա

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 37-րդ հոդվածով ,ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 11-րդ կետի զ-ենթակետով, ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին որոշմամբ և հիմք ընդունելով սույն կարգի 2-րդ դրույթը սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման 8-րդ կետը, Անուշավան Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ճամբարակ համայնքի գյուղ Ձորավանք 2-րդ փողոց,թիվ 21 հասցեում գտնվող 05-061-0023-0001 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով: Շինությունները կառուցված է իրեն հատկացված հողամասում:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Անուշավան Ավետիսյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում /2026VWCZFT/ ինքնակամ կառուցված 39,6 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 13,4 քմ բաց պատշգամբը և 2,88 քմ աստիճանահարթակը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված շինությունների արժեքը կազմում է 35.300 /երեսունհինգ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ, վճարել 900185061158 հաշվի համարին՝ համարել Անուշավան Ավետիսյանի սեփականություն:
3. 43,07 քմ արտաքին մակերեսով զրուցարանը, 36.19 քմ բաց պատշգամբը, 4.8 քմ աստիճանահարթակը, 55.1 քմ մակերեսով ծածկը և թվով 5 հատ պատուհանները թողնել ինքնակամ, քանի որ կառուցված են 2022 թվականին:

4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ղեկավարի 13.04.2026թ. N 467-Ա որոշումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. մայիսի 07
ք. Ճամբարակ